ԿԱՐԾԻՔ

Պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ՏԻԳՐԱՆՅԱՆԻ ներկայացված «Մշակութային ժառանգության պահպանությունը. տեսական մոտեցումները, միջազգային փորձը և Արցախի մշակութային ժառանգության պաշտպանության խնդիրները» խորագրով ատենախոսության վերաբերյալ

Թեկնածուական ատենախոսության վավերական լինելու առաջին պայմանը թեմայի գիտական կշիռն է, այսինքն՝ թեման հնարավորություն տալի՞ս է, որ ատենախոսը բացահայտի իր հետազոտական հնարավորությունները:

Պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցող, մշակութաբան Արմինե Հարությունի Տիգրանյանի «Մշակութային ժառանգության պահպանությունը. տեսական մոտեցումները, միջազգային փորձը և Արցախի մշակութային ժառանգության պաշտպանության խնդիրները» խորագրով ատենախոսության թեման, այս առումով բարդ է, մեծ ջանքեր պահանջող:

Ատենախոսությունը նվիրված է մշակութային ժառանգության պահպանության միջազգային տեսական սկզբունքների, պահպանության հայեցակարգերի քննությանը և ժառանգության հնարավոր պաշտպանության մեխանիզմներին :

Ատենախոսությունը կազմված է ներածությունից, չորս գլուխներից (որոնցից յուրաքանչյուրն ունեն իրենց չորս ենթագլուխները), եզրակացություններից, օգտագործած գրականության ցանկից, հավելվածից:

Տեքստի շարադրանքը կազմում է A4 ֆորմատի 201 համակարգչային էջ:

Ներածության մեջ հիմնավորվում է թեմայի արդիականությունը, ներկայացվում են ուսումնասիրության նպատակն ու խնդիրները, հիմնախնդրի ուսումնասիրվածության աստիճանը, գիտական նորույթն ու գործնական նշանակությունը: Ատենախոսը առաջադրում է խնդիրներ, որոնց լուծման համար անհրաժեշտ են ոչ միայն մշակութաբանական, այլև իրավական գիտելիքներ և հմտություններ, դրանք վերլուծելու, ներկա իրողությունների համատեքստում տեղայնացնելու և ճշգրիտ եզրահանգումներ կատարելու կարողականություն, ինչը, կարծում ենք, ատենախոսին հաջողվել է:

Ատենախոսության առաջին գլուխը (էջ 19-62) կրում է «Մշակութային ժառանգության պահպանման տեսական հիմքերը և Արցախի ժառանգության ոչնչացումն Ադրբեջանի կողմից» վերնագիրը, որտեղ մշակութային ժառանգության (նյութական և ոչ նյութական) պահպանման տեսական և իրավական փաստաթղթերի վերլուծությամբ ներկայացվում են Արցախի ժառանգության առկա խնդիրները, ժառանգության ոչնչացման քաղաքականությունը, մեխանիզմները:

Կատարվում է ոչնչացված արժեքների փաստագրում, ըստ բնույթի և տեսակի դասակարգում, առանձնացվում են արցախահայերի արհեստները, մշակութային պրակտիկաները՝ կրոնական ծեսերը, ուխտագնացությունները, փառատոնները, տեղական խոհանոցի գաստրոնոմիական փորձառությունը և, ի վերջո, այդ ամենի կասեցումը, ոչ նյութական ժառանգության փոխանցման անհնարինությունը, ինչը ներկայացված է ամենայն մանրամասնությամբ, փաստացի ու միանգամայն արժանահավատ հիմնավորումներով:

Մասնավորապես այս գլխի 3-րդ ենթագլուխը վերաբերում է հոգևոր-**մշակութային արժեքների ֆիզիկական ոչնչացմանը** (եկեղեցիների, խաչքարերի, արձանագրությունների, պատկերաքանդակների ոչնչացում), հաղթանակի և **ցեղասպանության հիշողության ոչնչացում** (Արցախի անկախության շրջանի Արցախյան ազատամարտին, Հայոց ցեղասպանությանը նվիրված հուշարձանների/հուշահամալիրների ոչնչացում), **պատմական հետքի** ոչնչացում (պատմական գերեզմանոցների, ամբողջական թաղամասերի/գյուղերի ավերում), **աշխարհիկ հուշարձանների ոչնչացում** (թանգարաններ, մերօրյա արժեքներ), **Արցախի խաչքարերի՝** որպես հայ ինքնության ամենաբնութագրական և ինքնատիպ խորհրդանիշներից մեկի **ոչնչացմանը:**

Այս ամենով, ինչպես նշում է ատենախոսը, Ադրբեջանը վնասում է արցախահայերի հոգևոր կապն այդ արժեքների հետ, զրկում պրակտիկաների, աղոթքների տարածքներից՝ խոչընդոտելով հատկապես ծիսական գործունեություն ծավալելու նրանց հետագա կարողությանը՝ խախտելով նաև կրոնական ազատության իրավունքը:

Ատենախոսության երկրորդ գլխում (էջ 63-100) «Արցախի մշակութային ժառանգության պաշտպանության մեխանիզմները միջազգային համակարգում»

ատենախոսն անդրադարձել է ժառանգության պահպանության և պաշտպանության միջազգային համակարգին, վերլուծության է ենթարկել ժառանգության իսկության, ամբողջականության, բացառիկության, մշակութային կարևորության սկզբունքները՝ պատերազմների, խաղաղության ժամանակ, ինչպես նաև բռնազավթված տարածքներում մշակութային արժեքների պաշտպանության միջազգային կանոնակարգերի, ՄԱԿ-ի, ՅՈՒՆԵՍԿՕ-ի և լայն առումով միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի լույսի ներքո:

Ատենախոսության երրորդ գլուխը (էջ 101-140) կրում է «Արցախի ոչ նյութական մշակութային ժառանգության պաշտպանությունը՝ ժառանգության լայն հայեցակարգի և մշակույթի իրավունքի համատեքստում» վերնագիրը, որտեղ հանգամանորեն վերլուծության են ենթարկվում մշակույթի իրավունքի կոնցեպտն ընդհանրապես և այդ համատեքստում Արցախի մշակութային ժառանգությունը՝ մասնավորապես, մշակույթի իրավունքի խախտումը՝ որպես բռնի տեղահանությանը նպաստող գործոն և Ադրբեջանի կողմից Արցախի մշակութային ժառանգության բռնայուրացման քաղաքականությունը:

Ատենախոսության չորրորդ գլուխը (էջ 141-163) կրում է «Միջազգային հանրության անհամաչափ արձագանքը՝ Ադրբեջանի կողմից Արցախի մշակութային ժառանգության ոչնչացմանը» վերնագիրը, որտեղ միջազգային կոնվենցիաների, կանոնակարգերի և միջազգային համապատասխան կանոնադրությունների տեսանկյունից քննության են ենթարկվում Արցախի մշակութային արժեքների ոչնչացման խախտումները՝ ինչպես պատերազմի ժամանակ, այնպես էլ նոյեմբերի 9-ի եռակողմ համաձայնագրից հետո, նաև Արցախի ամբողջական հայաթափումից հետո: Ներկայացվում են Ադրբեջանի քաղաքականության դատապարտմանն ուղղված՝ միջազգային հանրության պատասխանատու կառույցների որոշումներն ու բանաձևերը, որոնց ոչ համաչափ լինելու ֆոնին՝ ատենախոսը ընդգծում է միջազգային հրատապ միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտությունը:

Եզրակացություններում համակարգված ձևով ի մի են բերված ատենախոսության ներածության մեջ և 4 գլուխներում ու ենթագլուխներում

ներկայացված և մանրազնին քննարկված հետազոտությունների արդյունքները, մեկնաբանություններն ու հետևությունները՝ 16 կետով:

Ատենախոսության մեջ նաև մանրամասն քննության են ենթարկվել Ադրբեջանի կողմից Արցախի ժառանգության ոչնչացման դրդապատճառները, մեխանիզմները, ուղղությունները, ներկայացվել են դրանց հետ կապված արցախահայերի իրավունքները և առաջարկվել են պաշտպանության միջազգային երաշխիքների հնարավորություններ: Ատենախոսության հեղինակին հաջողվել է արդի - միջազգային իրավական համակարգում մշակութային ժառանգության պաշտպանության խնդիրը դիտարկել էթնիկ համայնքի մշակութային իրավունքների պաշտպանության շրջանակից դուրս՝ այն դարձնելով համապարփակ ուշադրության արժանի տարածաշրջանային և աշխարհաքաղաքական խնդիր:

Աշխատանքում մանրամասն քննվում են ժառանգության պահպանության մշակութային իրավունքները, միջազգային մարդասիրական իրավունքի նորմերը, որոնց համատեքստում մանրամասն վերլուծվում են Արցախի մշակութային ժառանգության պաշտպանության համակարգային խնդիրները 2020 թվականի պատերազմից հետո՝ դիտարկելով դրանք Ադրբեջանի կողմից հայկական մշակութային ժառանգության ոչնչացման, յուրացման, պղծման, անվանափոխման, արցախահայերի բռնի տեղահանության և ժառանգության շարունակականությունը կասեցնելու շղթայում:

Ատենախոս Արմինե Տիգրանյանը ընդգծում է Ադրբեջանի կողմից Արցախի ոչնչացված ժառանգության փաստաթղթավորման, կիրառվող քաղաքականության ուղղությունների դասակարգման և պաշտպանության միջազգային երաշխիքների որոնման անհրաժեշտությունը, հետագա ոչնչացումը դադարեցնելու նպատակով՝ ազգային և միջազգային համապատասխան ոլորտի կազմակերպություններին ներկայացնելով գործնական առաջարկություններ, ապացույցներ և փորձագիտական վերլուծություններ, որոնց մշակումն ու գործարկումը կարող է ելակետային դերակատարություն ունենալ Ադրբեջանի կողմից ժառանգության ոչնչացման քաղաքականությանն առնչվող միջազգային դատական գործընթացներում:

Դրվատանքի է արժանի մշակութաբանության այս շատ արդիական և աշխատատար ոլորտին վերաբերող բարեխիղճ աշխատանքը, որը կատարվել է միջազգային կանոնակարգերի և արդի հետազոտական մեթոդների համաձայն:

Ատենախոսության մեջ առաջադրված են խնդիրներ, որոնք ստացել են իրենց հնարավոր պատասխանները:

Աշխատանքի պատշաճ մակարդակով իրականացման մեջ կարևորում ենք ատենախոսության գիտական ղեկավար, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Համլետ Պետրոսյանի մասնագիտական խորհրդատվությունն ու աջակցությունը:

Բարձր գնահատելով Արմինե Հարությունի Տիգրանյանի կատարած մանրակրկիտ ու բարեխիղճ աշխատանքը, ցանկանում ենք ներկայացնել մի քանի դիտողություններ և առաջարկություններ, որոնց հնարավոր կիրառումը կարող է ավելի շահեկան դարձնել ատենախոսությունը:

1. Թեզի թեման, անշուշտ, արդիական է, բայց նաև մեր հասարակության առջև ծառացած լրջագույն խնդիրների համատեքստում՝ զգայական, ինչով էլ երևի կարելի է բացատրել այն հանգամանքը, որ նման աշխատանքների համար պահանջվող չեզոք շարադրանքը որոշ դեպքերում տեղի է տվել զգացմունքայնությանը:

2. Տեղ-տեղ հեղինակի խոսքն ու կոնվենցիաների կետերը այնպես են խառնվում, որ կարծես թե իրարից չեն տարբերվում: Այս առումով թերևս նախորդ գլուխների համար շատ հաջողված օրինակ կարող են ծառայել աշխատանքի երրորդ և չորրորդ գլուխները, քանի որ առավել հստակ են, ամբողջական և զերծ երկարաբանությունից:

3. Ատենախոսությունն ունի մեկ «Հավելված» բաժին, որը պարունակում է բռնի տեղահանված արցախահայերի հետ բավական տարողունակ 23 հարցից բաղկացած հարցաշար, ինչը նշված չէ աշխատանքի բովանդակության մեջ:

4. Արցախի Հանրապետության տարածքում պաշտոնապես գրանցված ավելի քան 4000 հուշարձանները ինքնին տարածքի պատմահիրավական պատկանելության անվիճարկելի ցուցիչն են, ինչպես իրավամբ նշվում է

ատենախոսության մեջ, և կարծում ենք, որ մասնավորապես ոչնչացված ժառանգության դեպքերն ու կրած վնասները՝ կարելի էր աղյուսակի կամ դիագրամների տեսքով ներկայացնել 2-րդ հավելվածում: Առավել տեսանելի լինելու առումով նույնը կարող է վերաբերել նաև Արցախի ոչ նյութական մշակութային ժառանգությանը:

5. Աշխատանքի վերջում բացակայում է «համառոտագրություններ», հատվածը, այնինչ ատենախոսության մեջ առկա են հապավումներ և համառոտագրություններ, որոնք բացված չեն:

Ամփոփելով, ուզում ենք ընդգծել, որ արված դիտողություններն ու նկատառումները, բխում են միայն աշխատանքն անթերի տեսնելու ցանկությունից և, ըստ էության, դրանք չեն ստվերում այն լայնածավալ ու տքնաջան աշխատանքը, որը ներկայացվել է պաշտպանության:

Արմինե Հարությունի Տիգրանյանի աշխատանքը լիովին համապատասխանում է թեկնածուական ատենախոսություններին Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ԲԿԳԿ կողմից ներկայացվող պահանջներին:

Ատենախոսության սեղմագիրն ամբողջությամբ ներկայացնում է աշխատանքի համառոտ և ամփոփ շարադրանքը:

Ուստի, ատենախոս Արմինե Հարությունի Տիգրանյանը միանգամայն արժանի է հայցած պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս՝ ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի Բանահյուսության տեքստաբանության բաժնի վարիչ, բան. գիտ. դոկտոր, դոցենտ՝ Թ. Հայրապետյան

Պաշտոնական ընդդիմախոս՝ բան. գիտ. դոկտոր, դոցենտ Թ. Հայրապետյանի ստորագրությունը հաստատում եմ:

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի փոխտնօրեն, բան. գիտ. թեկնածու Տ. Դալալյան

10.03.2025